# ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ

Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի 7 Յունիս 1997, Ամավերջի Հանդէս

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր, Գերաշնորհ եւ հոգեշնորհ Հայրեր, Պատուարժան ուսուցիչ եւ ուսուցչուհիներ, Պատկառելի ներկայացուցիչներն՝ Ազգային հաստատութեանց, Ցարգելի ծնողներ եւ ներկաներ, եւ շատ սիրելի աշակերտներ,

Կողջունեմ ձեր բոլորը։ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի ամավերջի այս հանդէսին բարի եկած էք. ձեր ներկայութիւնը ուժի, սիրոյ եւ քաջալերանքի աղբիւր մըն է մեզի համար։

Այժմ կը փափաքիմ ներկայացնել ձեզի 1996-1997 ուսումնական տարեշրջանին վարժարանիս մէջ կատարուած կրթական աշխատանքները, մատնանշելով որոշ փոփոխութիւններն ու նուաճումները։

Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանը 2 Սեպտեմբեր 1996ին սկսաւ իր ուսման տարեշրջանը 151 աշակերտ եւ 60 ուսուցիչներով։ Անցեալ տարի ունէինք 185 աշակերտներ։ Ուրախացուցիչ էր այս տարի ունենալ յաւերեալ 16 աշակերտներ։

185 աշակերտներ։ Ուրախացուցիչ էր այս տարի ունենալ յաւնեալ 16 աշակերտներ։

Մաղիմահայութեան յանախ նուագող բնակչութեան թիւր նաեւ տխուր
սպառնալիք մրն է Ս. Թարգմանչաց վարժարանի ապագային։ Կեանքի ստիպող
պայմանները Հայ բնակչութիւնը կր ստիպէ Հին Քաղաքեն դուրս բնակութիւն
հաստատելու. կամ Նոր Քաղաք կամ ալ Երուսաղէմի շրջակայքը։ Այս պարագան
հետգհետէ անհրաժեշտ կր դարձնէ ապահովել փոխադրամիջոցները, որպեսզի
կարողանանք այս շրջաններու աշակերտութիւնը բերել մեր վարժարանին եւ անոնց ալ
տալ առիթը՝ ազգային կրթութեան։ Մօտիկ ապագային արդէն անհրաժեշտութիւն մր
պիտի դառնայ այս աշակերտութիւնը դպրոց բերել եր կ՛ուզենք մեր վարժարանի
«քափասիթէն» պահել 150 աշակերտի սահմաններու շուրջ։ Եթէ ոչ, աշակերտութեան
թիւի նուագումը անխուսափելի կը թուի։ Եւ այս նուագումը կրնայ պատճառ դառնալ
լուրջ հետեւանքներու՝ վտանգելով վարժարանիս առաքելութիւնը եւ որակը՝ թէ

Թարգմանչացը ամեն գինով պէտք է ապրի եւ զարգանայ։ Երբ որ Թարգմանչացը բարձրանայ մենք ալ կը բարձրանանք անոր հետ միասին եւ երբ որ ձախողի մեր անկումն է անիկա։ Երուսաղէմի մէջ Հայապահպանման հաւաստիքն է այս վարժարանը եւ միակ կեդրոնը, ուր հայ մանուկը, պատանին եւ երիտասարդը հայեցի դաստիարակութիւն կրնան ստանալ։ Հետեւաբար, երբէք աւելորդութիւն թող չի սեպուին այս վարժարանի համար կատարուած ծախսերը եւ տնտեսական զոհողութիւնները։ Ամենքս լաւ գիտենք որ ազգային վարժարանները տնտեսապես շահաբեր հաստատութիւններ չեն երբեք. սակայն մեր ազգային շահերը կը պահանջեն որ նոր սերունդները լաւագոյն կրթութիւնը ստանան ի գին ամեն զոհողութեան։ Եւ կրկին գիտենք որ լաւ կրթութիւնը սուղ է. սակայն այնքան սուղ չէ որքան գաղութ մը չունենայ ազգային վարժարան մը եւ դատապարուի ճերմակ ջարդի մը։ Ահա այս է ամենեն սուղ գինը որ սփիւոքի շատ մը գաղութները դժբախտաբար կը վճարեն ամեն օր, չի կրելու համար ազգային վարժարան մը բաց պահելու դժուարութիւնները։ Բայց որքան ատեն որ Սրբոց Ցակորեանց Միաբանութիւնը գոյութիւն ունի, ապահովուած է Ս. Թարգմանչաց Վարժարանի գոյութիւնը, որ հաւաստիքն է այս գաղութի գոյատեւման։

Ունեցանք խաղաղ եւ համերաշխ տարի մը առանց ունենալու որեւէ լուրջ կարգապահութեան հարց մը։ Աշակերտ եւ ուսուցիչներով միասին մեր վարժարանը այս տարի եւս ներկայացուց կատարեալ ներդաշնակութիւն մը. եւ իրագործելով մեր կրթական եւ ուսման ծրագիրները լիուլի՝ այս տարեշրջանը բոլորեցինք 28 Մայիս

1997ին ամավերջի քննութիւններով։

### Տնտեսական Նոր Կարգաւորումներ

Այս տարի Հոգլ. Հայր Թեոտորոս Ջաքարեանը ստանձնած է Տնտեսութեան վարչութիւնը։ Հոգջ. Հայր Աւետիս Իփրանեանը, որ անցեալ տարուայ Վարիչն էր, այժմ իր ուսման ծրագիրները կր հետապնդէ. յաջողութիւն կը մաղթենք իրեն։

### Կրթական Հարցեր

Այս տարի եւս չորս ընդհանուր ուսուցչաց ժողովներ ունեցանք, ուր

Այս տարի եւս չորս ընդհանուր ուսուցչաց ժողովներ ունեցանք, ուր
ծեծուեցան հարցեր, լուծումներ գտնուեցան, էական որոշումներ առնուեցան եւ
ճշղուեցաւ Վարժարանիս ընդհանուր ընթացքը այլ եւ այլ նիւթերու շուրջ։
Կազմակերպեցինք նաեւ ծնողաց-ուսուցչաց հանդիպումներ, որպեսզի ուսուցիչ
եւ ծնողներ ուղղակի կապ հաստատէին աշակերտներու ուսման վիճակի մասին։ Այս
տարի ունեցանք երկու ընդհանուր հանդիպում՝ ուսուցիչ եւ ծնողները քով քովի
բերող։ Այս հանդիպումները առիթ կ՚ընծայեն իւրաքանչիւր աշակերտի ուսումնական,
կարգապահական, հոգեբանական եւ այլ վիճակներու շուրջ զրուցել իրենց ծնողներու
հետ եւ միասնաբար լուծումներ գտնել որոշ հարցերուն։ Ծնողներու եւ ուսուցիչներու
հասարակաց գաղափարն այն է, որ շատ տեղին եւ օգտակար ձեռնարկներ էին այս
հանոհաումները։ հանդիպումները:

Անցեալ Ամաս եւ այս տարի կատարուած մեծածախս նորոգութիւններու շնորհիւ Վարժարանս օժտուեցաւ նոր տարրալուծարանով մը, որ գալ տարւընէ սկսեալ գործածութեան պիտի դրուի կատարելապէս։ Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք Պարոն Յակոբ Անդրէասեանին, իր բերած կամաւոր մասնակցութեան համար։ Պր. Անդրէասեանը միջնորդած է Երրայական Համալսարանի բարձրաստինան անձնաւորութիւններուն, որոնք ձրիաբար օժանդակած են մեր տարրալուծարանին՝ գանազան քիմիական ապրանքներով եւ թանկագին գործիքներու սարքաւորումներով։ Մենք պէտք ունինք մեր ազգայիններու գործօն մասնակցութեան, դիմագրաւելու շատ մը պահանջները մեր ազգային վարժարանին։ Կը յուսանք քաջալերական դեր կ'ունենայ Tupna Uanptwubuah ophawyn:

Մարժնաժարգութեան եւ Երաժշտութեան դասերը կը շարունակուին։ Յայտնի է Մարժնաժարգութեան եւ Երաժշտութեան դասերը կը շարունակուին։ Ծայտնի է սակայն, որ անթաւարար են այս նիւթերու յատկացուած դասապահերը. բայց շատ դժուար է հինգ լեզուներով խնոդուած դասացուցակը աւելի եւս բեռնաւորել նոր դասապահերով։ Այս տարի որոշ դժուարութիւն մը ունեցանք Մանչերու համար Մարզանքի Պարոն մը ճարելու մէջ։ Ընդհանրապես, Թարզմանչացի ուսուցչութեան ասպարեզը կը գտնուի կանանց գերիշխանութեան տակ։ Միմիայն երեք Հայ Պարոններ կը պաշտօնավարեն եւ նոր Պարոն մը գտնել գրեթէ անկարելի դարձած է։ Պատճառը հիմնականօրեն տնտեսական է։ Սակայն կը յուսանք որ, վերջին երկու տարիներու գոհացուցիչ վճարումներու շնորհիւ որ կատարուեցան Ամեն. Պատրիարք Հօր տնօրինութեամբ, ուսուցչութեան ասպարեզը գրաւիչ կը դառնայ նաեւ Հայ Պարոններուն։ Պարոններուն:

Դժբախտաբար, հակառակ երկու Խաղադաշտերու գոյութեան, դպրոցիս աշակերտութիւնը կարող չէ անոնցվէ որեւէ մէկը օգտագործելու՝ ներկայ անյարմար եւ անինամ վիճակի պատճառով։ Ասիկա նաեւ գաղութային հարց մըն է եւ որոշ ծրագիրներ կը մշակուին զանոնք նորոգելու եւ գործածութեան ներքեւ դնելու։ Գոնէ ասոնցմէ մէկը եթէ նորոգուէր մեզի կարելիութիւն պիտի ընծայէր մարզանքի աշխատանքները աւելի ազդու դարձնելու։ Եւ ինչ՞ու չէ, ձեզմէ շատերուն համար "նօսթալճի" դարձած դաշտահանդէսները վերակենդանացնել կարելի պիտի ըլլայ։ Դպրոցի խաղադաշտի նորոգումը եւ գործածութեան դրուիլը ունի նաեւ ապահովական մեծ արժէք. Ժամը տասնի եւ տասներկուքի դադարներուն աշակերտութիւնը ազատ կը մնա, եւ հսկառութեան մեծ հարց կո ծագի, եւ երբենն փոքրին աշակերտութիւնը ազատ կո մեծ արժլ։ Ժասը տասար եւ տասարդութի դադարարուս աշագորտութիւսը ազատ գր մնայ եւ հսկողութեան մեծ հարց կը ծագի, եւ երբեմն փոքրիկ աշակերտները անգամ գնումներ կատարելու համար մինչեւ Արաբական շուկան կերթան, եւայլն... Եթե լուծում մը գտնուի խաղադաշտի հարցին, ասիկա պիտի պակսեցնէ նաեւ այն աղմուկը, որ մեր աշակերտները խաղի ատեն կը հանեն վանքի բակին մէջ եւ յաճախ բնակիչներու գանգատներուն պատճառ կը դառնան։

#### Մշակութային Ձեռնարկներ

Այս տարի, կրկին աւանդաբար, տշնեցինք վարժարանիս անուան օրը, " Սրբոց Թարգմանչաց Վարդապետներուն" նուիրուած անմոռանալի հանդէսով մր։ Ուրախ եւ գուարճալի հանդէսներով դիմաւորեցինք նոր Տարին եւ Կաղանդը։ Բարեկենդանին ունեցանք Դիմակաւոր Վարահանդէս մը։ Մարտ 21-ին յատուկ հանդէսով մը տշնեցինք Մայրերու օրը։ Այս հանդէսներու յաչողութիւնը մենք կը պարտինք Բանաստեղծուհի Տոքթոր Անուշ Նազգաշեանին որ պատասխանատուն է վարժարանիս մշակութային ձեռնարկներուն։ Զգալի էր իր բերած նոր շունչը Թարգմանչացէն ներս։ Ծնորհակալ ենք Տիկին Նունէ Պօդոսեանին, որ մեր երաժշտութեան ուսուցչուհին է Հայաստանէն, մեր հանդէսներուն իր բերած մասնակցութեան համար։

17 Մայիսին ունեցանք Ձեռագործի մեր աւանդական Գազարը, ուր գուցադրուեցան մեր աշակերտուհիներու ձեռագործի աշխատանքները։ Այս

17 Մայիսին ունեցանք Հեռագործի մեր աւանդական Կազարը, ուր ցուցադրուեցան մեր աշակերտուհիներու ձեռագործի աշխատանքները։ Այս ցուցահանդէսը մեծ հետաքրքրութիւն գտաւ, արժանանալով այցելուներու մեծ գնահատանքին։ Հիացում պատճառեցին ներկացուած ձեռագործի կտորները, որոնք ամբողջ տարի բծախնդրօրէն պատրաստուած էին, ձեռագործի ուսոցչուհիներուն Տիկին Անթառամ Գարակէօգեանին եւ Օրիորդ Ազնիւ Պաղտասարեանին հսկողութեամբ եւ վարպետ ցուցմունքներուն տակ։ Կը շնորհաւորենք մեր ուսուցչուհիներն ու աշակերտուհիները այս փայլուն եւ յաջող ցուցահանդէսին համար։
Անցեալ Շաբաթ, 61 Մայիս 1997ին ունեցանք մեր Մանկապարտեզի շատ սիրալիր հանդէսը։ 11 շրջանաւարտներ Մաղիկ դասարանէն թարձրացան նահանորատանի առաջին ռասարան։ Այս ուրախառիթ հանդէսը յուժ տպաւորիչ էր,

նախակրթարանի առաջին դասարան։ Այս ուրախառիթ հանդէսը յոյժ տպաւորիչ եր, շատ լաւ պատրաստուած եւ կազմակերպուած։ Շնորհակալ ենք այս անժոռանալի հանդէսը պատրաստու ուսուցչուհիներուն, Օրիորդ Այրին Գաբլանեանին եւ Օրիորդ Սուզաննա Միրզոյեանին:

Ինչպես նախորդ տարիներուն պյս տարի եւս Թարգմանչացի մեր աշակերտները կատարեցին իրենց եկեղեցական պարտականութիւնը կանոնաւոր կերպով մասնակցելով տօնական արարողութիւններուն եւ թափօրներուն։ Եկեղեցական երգեցողութեան պատասխանատուն Պարոն Վարուժան Մարգարեանը պէտք է յիջենք եւ ջնորհակալութիւն յայտնենք իր բերած յառաչդիմութեան համար այս մարզին մէջ։

Կը ծրագրենք վարժարանիս բոլոր արձանագրութիւնները համակարգիչի

անցնել- computerize- ընել։ Այս գործով կը զբաղի Պարոն Սարգիս Ղոյանեան։ Իսկ

անցնել- computerize- ընել։ Այս գործով կը զրաղի Պարոն Սարգիս Պոյաճեան։ Իսկ համակարգիչի յատուկ դասերը կը շարունակուին փափաքող աշակերտներու համար. Այս տարուան դասատուն էր Պր. Գառնիկ Պալրքնեան։

Այս տարի ձեռնարկեցինք եւ յաջողութեամբ գլուխ հանեցինք վարժարնիս Տարեգիրքը « Օրերն Ոսկի » մակագիրով։ Գաղափարը յղացան եւ աշխատակցեցան Աւարտական դասատանը խմբագրական Մարժնի հետ, որը կը կազմէին. Տեսուչը, Պր. Երիա Տիգրանեան, Տիկ. Արփինէ Նագգաշեան եւ Տոքթ. Անուշ Նագգաշեան։ Գիրքի ձեւաւրումը եւ նկարազարդարումը կատարուեցաւ Հոգջ. Հայր Ընծանուէր Պապախանեանի կողմէ։ Վարժարանիս նախկին շրջանաւարտներէն Պարոն Գաբրիել Պապախանեանը շատ յարմար գինով եւ բծախինդիր աշխատանքով գիրքի տպագրութեւնը ստանձնեց։ Երր որ ասոնց վրայ աւեղցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր կարգադրութեամբ նիւթական եւ բարոյական նեցուկը, լոյս տեսաւ այս անմոռանալի եւ պատմական աշխատանքը։ Պատմական, որովհետեւ այսպիսի ձեռնարկ մը չէ կատարուած 1948էն ի պեր։ Հիմակունէ արդեն մեր գաղութին մեծ գնահատանքին արժանացող այս Տարեգիրքը անպայման պիտի վերածուի մնայուն յիշատակի մը։ Գը շնորհաւորեն ծարորը այն անձերը, որոնք իրենց սրտագին մասնակցութիւնը թերին այս գործին։ Կը խնդրենք մեր ժողովուրդեն եւ բարերար ազգայիններեն նիւթապես նեցուկ կանգնիլ այսպիսի ձեռնարկներուն, որպեսզի շարունակել կարելի ըլլայ նման դպրոցական գործունեութիւնները։ գործունեութիւնները:

## G.C.E. EXAMINATIONS - Անգլիական Քննութիւններ

Անցեալ տարի ունեցանք վեց շրջանաւարտ աշակերտներ, որոնցմէ չորսը եւ այս տարուան շրջանաւարտ աշակերտներէն ոմանք մասնակցած էին 1996 Անգլիական G.C.E.ի քննութեանց, որոնց արդիւնքը եղած է հետեւեալը. Մարալ Գալայնեան անցած է 7 նիւթերէն եւ յաջողած է նաեւ Գրարար եւ Unumbrila A-Level flianiphulig Ster

– Անժէլա Գարակէոգեան չորս նիւթերու մէջ յաջողած է եւ նոյնպէս անցած է A-Level Trupup be Unuphpth flinephillibpp:

- Քաթիա Բանիկեան յաջողած է չորս նիւթերու մեջ։

- Լիլի Մուլուխիյէ յացողած հինգ նիւթերու մեց եւ Արաբերեն A-Levelh մեջ։ Անցեալ Տարուան Քննութիւններու մէջ Հինգ հոգի Գրաբար A-Level եւ երեք հոգի Արաբերէն A-Levelh մէջ յաջողած են։ Կր շնորհաւորենք բոլորը։

Վարժարանս այս տարի եւս իրագործեց իր ուսումնական ծրագիրները dhow alumph mabbampny G.C.E. (General Certificate of Education) h քննութիւնները։ Տարիներու փորձառութիւնը ունեցող մեր ուսուցչական կազմը, Պարոն Եղիա Տիգրանեանի հսկոդութեամբ այս տարի եւս բծախնդրօրեն պատրաստեց մեր աշակերտները այդ ուդրութեամբ։ Այսօր մեր վարժարանի աւարտական 11րդ դասարանի ութ աշակերտները Կարժանանան վկայականներու, որոնց անուններն են.-

Նարինէ Մագուպեան Թամար Կիրակոսեան Անուշ Ցակորեան Puiha Uitabua

Ցակոր Գէորգեան Ազնիւ Հինտոյեան Սիլվա Կարապետեան Վազգեն Steppabul

Այս շրջանաւարտները, ինչպէս նաեւ մեր երկրորդական 10րդ դասարանի աշակերտները մասնակցեցան Անգլիական G.C.E.h միջազգային քննութեանց, որոնց արդիւնքները պիտի ստանանք յառաջիկայ Սեպտեմբեր եւ գալ տարուան մեր տեղեկագիրով կը յայտարարենք։

Ընդհանուր Շնորհակալութիւններ։

Այժմ անդրադառնալ կուզեմ այն անձերուն որոնց Ս. Թարգմանչաց Վարժարանը ունի մասնաւոր շնորհակալանքի պարտականութիւն։ Այս շնորհակալանքի 

որքան կը սիրէ մեր վարժարանը եւ մեր աշակերտները։ Այս տարի չկար ձեռնարկ մը կամ հանդէս մը՝ կատարուած մեր դպրոցին մէջ, որ չվայելէր իր անմիջական նեցուկը եւ հովանաւորութիւնը։ Ամենապատիւ Տէր, Թարգմանչացը այս տարի աւելի եւս զօրացած եւ տոկուն կը զգայ ինքզինք՝ նիւթապէս եւ բարոյապէս։ Խորապէս

շնորհակալ ենք ձեր հայրական գուրգուրանքին համար։ Մեծ բախտաւորութիւն կը սեպեմ այս տարի աշխատակցիլ Հոգեշնորհ Հայր Թեոտորոս Աբեղայ Ջաքարեանի հետ։ Ամբողջ տարին գործակցեցաւ ինծի հետ որպես

տնտեսութեան վարիչը դպրոցիս, կատարեալ համերաշխութեամբ եւ հասկացողութեամբ։ Ծնորհակալ եմ Հայր Թէոտորոսին։ Հոգջ. Հայր Ընծանուէր Աբեղայ Պապախանեանը, միշտ պատրաստակամ եղած է օգնելու Վարժարանիս Հանդէսներուն՝ սատարելով իր գեղարուեստական տաղանդով։ Անուրանալի է նաեւ իր մասնակցութիւնը մեր Տարեգիրքին։ Այսօրուան բեմազարդումն ալ ինք ըրաւ։ Անգին է իր բարեկամութիւնը։ Ծնորհակալ ենք իրեն։

Փոխտեսուչ Պարոն Եղիա Տիգրանեանին կը յայտնեմ խորունկ շնորհակալութիւններս։ Առանց իրեն շատ դժուար է Թարգմանչաց մը երեւակայել։ Քովրնտի մեր համերաշխ գործակցութեան՝ մեր խորացած բարեկամութիւնը մեծ արժեք ունի Թարգմանչացի բարօրութեան համար։ Բախտաւոր է Թարգմանչացը եւ Սաղիմահայութիւնը ունենալով Պարոն Եղիան իր երկաթեայ կամքով եւ ուսուցչական մեծ տաղանդներով։ Աստուած աւելցնէ իր առողջութիւնը։ Արեւշատութիւն կը մաղթեմ

Պարոն Յարութիւն Պետրոսեանը, որ ԸՆդհանուր հսկողն է մանչերուն եւ Տիկին Արշալոյս ծագուպեանը, որ Ընդհանուր հսկողն է աղջիկներուն եւ քարտուղարը՝ դպրոցիս, իրենք ալ մեծապէս դիւրացուցին իմ բեռս՝ դպրոցը կառավարելու դժուար

գործին մեջ։ Ամենեն դժուար եւ անախորժելի գործն է դպրոցի մեջ շարունակ հսկել եւ կարգապահութիւն պահանցել աշակերտներեն։ Ծատ «pophiltp» գործ մր չէ իրենցինը՝ աշակերտներու կողմե դիտուած։ Սակայն իրենք այնքան վարպետօրեն եւ

իրենցինը՝ աշակերտներու կողմէ դիտուած։ Սակայն իրենք այնքան վարպետօրեն եւ անկողմնակալ հոգիով կը կատարեն իրենց հսկողութեան գործը, որ բոլոր աշակերտներու կողմէ անխտիր կը սիրուին եւ կը յարգուին։ Ծնորհակալ եմ իրենց։

Ծնորհակալ ենք մեր բոլոր ազգային բարերարներուն, որոնք չմուցան Թարգմանչացը զանազան առիթներով եւ տուին իրենց սիրոյ նուէրները։ Արդէն շնորհակալութեան գիր եւ ընկակագիր կուղարկենք բոլոր մեր բարերարներուն։ Մասնաւորապէս պարտ կը զգամ յիչելու Ամերիկայի մեր Ս. Թարգմանչաց Վարժարանի Սանուց Միութիւնը, որ կատարեց զանագան առիթներով թանկագին եւ իմաստալից նուիրատուութիւններ։ Շատ զգացուեցանք երբ որ կաղանդի առիթով մեր բոլոր աշակերտներուն համար ուղարկեցին այլագան նուէրներ։ Այսօրուան հանդէսին համար եւս իրենք հաստատած են դրամական մրցանակներ մեր յաջող աշակերտներուն համար։ Խորապէս շնորհակալ ենք։ Երախտապարտութեամբ կը յիշենք Գալուստ Կիւլպէնկեան Հաստատութիւնը, որ ամէն տարի շօշափելի գումար մր կը յատկացնէ Վարժարանիս համար, այս տարի եւս ստացանք իրենց օգնութիւնը։

Շնորհակալութիւն Տէր եւ Տիկին Վահագն եւ Յասմիկ Յովնանեաններուն, որոնք

կրթական հիմնադրամ մր հաստատեցին՝ նուիրելով 5000 Ամերիկեան Տոլար, Ի յիշատակ Տիկին Յովնանեանի հօր եւ Թարգմանչացի բազմամեայ ուսուցիչ Սեդրակ

Պարտոյանի:

Ծնորհակալ ենք Սրբոց Յակոբեանց Միաբանութեան։ Այս միաբանութեան կր

պարտի Թարգմանչացը իր գոյութիւնը եւ ապագան։ Ծնորհակալ ենք Տոքթ. Անուշ Նագգաշեանին, որ մշակութայինի պատասխանատուն է։ Իր հանդէսներով վարժարանիս բերած թարմութեան եւ ստեղծած հայաշունչ մթնոլորտին համար խորապես կը գնահատուի աշակերտութեան եւ ժողովուրդի կողմէ։ Պարտք կը զգամ յատկապէս շնորհաւորեղ զինք եւ Տիկին Արփինէ Նագգաշեանը Տարեգիրքի պատրաստութեան իրենց ցուցաբերած սրտանց մասնակցութեան համար։ Իրենց եւս կը մաղթենք ուժ, կարողութիւն եւ առողջութիւն։ Մեր բոլոր ուսուցիչ եւ ուսուցչուհիներուն, որոնք միշտ պատրաստ են օգնելու

վարժարանիս բոլոր ձեռնարկներուն. շնորհակալութիւն կը յայտնեմ։ Իրենց արդար իրաւունքն է բաժնել Թարգմանչացի յաջողութեան փառաւոր պսակը։ Ձեր վարձքը

կատար. սերունդներ երախտապարտ պիտի մնան ձեր նուիրումին:

Այս ամառ մեր ուսուցչուհիներեն երկուքը, օրիորդ Սօնա Եագուպեան եւ օրիորդ էլիզ Պաղամեանը կր ծրագրեն ամուսնանալ։ Թարգմանչացի Մեծ Ընտանիքին անունով կը շնորհաւորեմ եւ երջանկութիւն կր մաղթեմ իրենց։

Ծատ սիրելի շրջանաւարտներ,

Ձեզի համար հասաւ այն օրը, որ կերազէիք ձեր մանկապարտէզի տարիներէ ի վեր. յաջողութեամբ աւարտել Թարգմանչացը։ Որքան որ մօտեցան օրերը այնքան եւս աւելցաւ ձեր անհամբերութիւնն ու յուզումը։ Եւ ահա իրենց լրումին հասան ձեր ակնկալութիւնները։ Այսօր շրջանաւարտ եղաք։ Այլեւս կեանքը ձեզ կը սպասէ։ Քալեցէ՛ք դէպի ապագան մեր Lilpra բարեմաղթանքներով եւ օրենութեամբ։ Ամեն ինչ տուած է Աստուած ձեզի, երջանիկ ըլլալու համար։ Երիտասարդ էք, առողջ էք, տաղանդաւոր եւ խելացի։ Կեանքը կերկարի ձեր առջեւը սարքուած՝ աղւոր, ճոխ եւ հարուստ սեղանի մը նման։ Գացէք եւ ձեր երջանկութեան իրաւունքը ստացէք կեանքէն։ Ես, որպէս տեսուչ եւ յանուն ուսուցչաց կազմին եւ այս սրահը լեցնող բոլոր ներկաներուն անունով կը շնորհաւորեմ ձեզ եւ ձեր ծնողները։ Ցաջողութիւն կը մաղթեմ ձեր ամենուն։ Աստուած շնորհե ձեր սիրտի բոլոր փափաքներն ու բաղձանքները ։

Եւ այժմ բեմ կը հրաւիրենք Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, որպեսզի շրջանաւարտերուն Վկայականները *մրցանակները*՝ be աշակերտներուն։

Սահակ Արհղայ Մաշալհան

ՏԵՍՈՒՁ

## ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍՆԵՐ Ս. ԹԱՐԳՄԱՆՁԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Սրբոց Թարգմանչաց Մանկապարտեզի ամավերջի հանդեսը տեղի ունեցաւ Շաբաթ, 81 Մայիս 1997, Ժառանգաւորաց Վարժարանի Մանուկեան սրահին մեջ, նախագահութեամբ Ամեն. Ս. Գատրիարք Հօր։ Մանկապարտեզի եւ Նախակրթարանի Առաջին Դասարանի մանուկները, իրենց ուսուցիչներու դեկավարութեամբ, զուարճացուցին իրենց ծնողները եւ ներկաները իրենց երգերով, պարերով եւ արտասանութիւններով։ Ծաղիկ Դասարանի տասն ու մէկ աշակերտները շրջանաւարտութեան վկայական ստացան դպրոցի Տեսուչ Հոգշ. Տ. Սահակ Աբեղայ Մաշալեանի եւ Ամեն. Գատրիարք Հօր ձեռքէն։

Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի Ամավերջի հանդեսը տեղի ունեցաւ 7 Յունիս, Շաբաթ երեկոյեան ժամը 17.00ին, Ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ, Նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր։ Ներկայ էին Միաբանութեան անդամներ, աշակերտութեան ծնողներ եւ կոկիկ

հասարակութիւն մրո

Ցայտագրին առաջին մասին մէջ շրջանաւարտ ութը աշակերտները ներկայացուցին դպրոցական կեանքի զանազան երեւոյթեներեն սիրալիր եւ երգիծական դրուագներ, ճոխացած արտասանութիւններով։ Վարժարանի Երգչախոմբը մասնակցեցաւ զանազան դպրոցական երգերով։ Ցուզիչ մթնոլորտ մը ստեղծուեցաւ, երբոր Մանկապարտէզի շրջանաւարտ մանուկները ծաղկեփունջ տուին Երկրորդական Վարժարանի շրջանաւարտներուն։ Շրջանաւարտները իրենց ուղերձները կարդացին, հինգ լեզուներով։ Դպրոցի Տնտեսութեան Վարիչ Հայր Սուրբը, Տ. Թէոտորոս Աբղ. Զաքարեան, ներկայացուց վարժարանի տնտեսական կացութիւնը մանրամասնօրէն։ Տեսուչ Հայր Սուրբի տարեկան տեղեկագրէն յետոյ, ութը շրջանաւարտ աշակերտներ ստացան իրենց վկայականները։ Իւրաքանչիւր դասարանի յաջողագոյն աշակերտներ ստացան իրենց մրցանակները։

Պատրիարք Սրբազան Հայրը իր յորդորական խօսքին մէջ շեշտեց կարեւորութիւնը անհատականութիւն ունենալու։ Շրջանաւարտներուն ուղղուած իր խօսքերուն մէջ յիշեցուց որ ամէն մէկը տարբեր անձեր են եւ այդ տարբերութիւնը Աստուածային պարգեւ մըն է մարդուն շնորհուած եւ պէտք է որ ամէն մէկ անհատ այդ տարբեր յատկութիւնները զարգացնէ, իր եւ ուրիշներուն կեանքը ճոխացնելու եւ հարստացնելու ուղղութեամբ։ Պատրիարք Հօր օրհնութեան աղօթքով եւ խմբական "Հայր մեր"ի երգեցողութեամբ հանդէսր

փակուեցաւ 17.00ին։

Սրբոց Թարգ. Երկ. Վարժարանի շրջանաւարտներուն ի պատիւ, Երուսաղէմի Հայ Օգնութեան Միութիւնը Յունիս Ձ1ին, իսկ Հայ Երիտասարդաց Միութիւնը Յունիս Ձ4ին, իրենց ակումբի սրահներուն մէջ ճաշկերոյթով եւ նուէրներով պատուեցին շրջանաւարտները։ Իւրաքանչիւր ակումբի պատրաստած յայտագրով. եղան երգ, արտասանութիւն, նուագախումբով երաժշտութիւն, մաղթանքի խօսքեր՝ Տեսուչ Հայր Սուրբին, Վարչականներուն եւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր կողմէ։